

ԿՈՆՎԵՆՑԻԱ
ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԵՔԵՄԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ
ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները՝ ի դեմս իրենց Կառավարությունների, այսուհետ՝ Կողմեր,
Ելնելով ուղեւորների եւ ուղեքեմի միջազգային ավտոմոբիլային փոխադրումների ոլորտում համաձայնեցված գործողությունների անհրաժեշտությունից, համաձայնվեցին ներքոհիշյալի մասին.

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՅՈՂՎԱԾ 1

1. Սույն Կոնվենցիան տարածվում է Կողմերի՝ միջազգային հաղորդակցությունում ավտոբուսներով ուղեւորների եւ ուղեքեմի փոխադրումներ իրականացնող փոխադրողների վրա՝ անկախ նրանց գրանցման պետությունից եւ նրանց համար ունի պարտադիր ուժ, ինչպես նաեւ տարածվում է ավտոբուսներով ուղեւորների եւ նրանց ուղեքեմի փոխադրումների վրա, երբ փոխադրման պայմանագրում նշված է, որ փոխադրումն իրականացվում է առնվազն երկու Կողմերի տարածքով եւ մեկնման կամ ժամանման վայրը գտնվում է Կողմերից մեկի տարածքում:

2. Կոնվենցիան կանոնակարգում է փոխադրումների պայմաններն ու կանոնները, փոխադրողների պատասխանատվությունը, բողոքների եւ հայցերի ներկայացման կարգը:

3. Կոնվենցիայում օգտագործվող հասկացություններն ունեն հետեւյալ նշանակությունը.

ա) "ուղեւոր"՝ ֆիզիկական անձ, որը ի կատարումն իր անունից կամ անձամբ իր կողմից կնքված փոխադրման պայմանագրի, փոխադրվում է անվճար կամ վարձատրությամբ,

բ) "փոխադրող"՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որն իրականացնում է ուղեւորների եւ ուղեքեմի միջազգային փոխադրումներ եւ, գտնվելու վայրի օրենսդրությանը համապատասխան, գրանցված է որպես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտ,

գ) "ավտոբուս"՝ ուղեւորների եւ ուղեքեմի փոխադրման համար նախատեսված եւ չհաշված վարորդի տեղը, առնվազն յոթ տեղ ունեցող ավտոմեքենա,

դ) "տոմս"՝ ուղեւորի՝ ավտոբուսից օգտվելու իրավունքը հավաստող եւ փոխադրողի ու ուղեւորի միջեւ փոխադրման պայմանագրի կնքումը հաստատող փաստաթուղթ,

ե) "ուղեքեմ"՝ տրանսպորտով ուղարկվելու համար փաթեթավորված եւ ուղեւորից առանձին փոխադրվող բեռ,

զ) "ուղեքեռային անդորրագիր"՝ փաստաթուղթ, որը հաստատում է փոխադրման համար ուղեքեմի ընդունումը:

ԳԼՈՒԽ 2
ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՅՈՂՎԱԾ 2

1. Ուղեւորների եւ ուղեքեմի միջազգային փոխադրումների ընդհանուր պայմանները, որոնք ներառում են փոխադրումների կազմակերպումը եւ դրանք իրականացնելու իրավունքի ստացումը, ապահովագրման, սահմանային, մաքսային, սանիտարական եւ հսկողության այլ ձեւերի կարգը, կանոնակարգվում են հետեւյալ փաստաթղթերով.

բազմակողմ կոնվենցիաներով եւ համաձայնագրերով,

միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության մասին երկկողմ միջկառավարական

համաձայնագրերով,

Կողմերի ազգային օրենսդրությամբ:

2. Տոմսի, ուղեբեռային անդորրագրի եւ ֆորմուլյարի ձեւը հաստատվում է փոխադրողի ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի պետական իրավասու մարմինների կողմից եւ ընդունվում է այլ պետությունների տրանսպորտի բնագավառի պետական իրավասու մարմինների կողմից, որոնց տարածքով իրականացվում է փոխադրումը:

Ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի պետական իրավասու մարմինները կմշակեն տոմսի, ուղեբեռային անդորրագրի եւ ֆորմուլյարի ընդհանուր ձեւեր, որոնք հաստատվում են այն պետության ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի պետական իրավասու մարմինների կողմից, որոնց տարածքով իրականացվում է փոխադրումը:

ՅՈՒՐԱԾ 3

Ուղեւորների եւ ուղեբեռի փոխադրումը միջազգային հաղորդակցության ժամանակ կարող են իրականացվել մասնավոր, կոլեկտիվ, պետական կամ սեփականության խառը ձեւերի սուբյեկտ հանդիսացող փոխադրողների կողմից՝ ավտոբուսի գրանցման պետությունում տրված համապատասխան արտոնագրի առկայության դեպքում:

Կողմերը հանձնարարում են իրավասու մարմիններին պատրաստել արտոնագրերի փոխադարձ ճանաչման մասին փաստաթղթի նախագիծը:

ՅՈՒՐԱԾ 4

Ուղեւորների եւ ուղեբեռի միջազգային փոխադրումներ իրականացնելիս փոխադրողը ղեկավարվում է ճանապարհային երթուղեկության, բնության պահպանության բնագավառում այն պետության օրենսդրությամբ, որի տարածքով իրականացվում է փոխադրումը:

ՅՈՒՐԱԾ 5

Ուղեւորների եւ ուղեբեռի միջազգային փոխադրումների կազմակերպման եւ հսկողության կարգը սահմանվում է Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների միջազգային հաղորդակցության ժամանակ ուղեւորների եւ ուղեբեռի ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների Կանոններով, որը հանդիսանում է սույն Կոնվենցիայի անբաժանելի մասը՝ հաշվի առնելով նրա 17-րդ հոդվածի դրույթները:

ԳԼՈՒԽ 3

ՓՈԽԱԴՐՈՂՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՅՈՒՐԱԾ 6

Միջազգային փոխադրումների ժամանակ փոխադրողների պատասխանատվությունը, ինչպես նաեւ բողոքների եւ հայցերի ներկայացման կարգը կանոնակարգվում է սույն Կոնվենցիայով, միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության մասին երկկողմ համաձայնագրերով, ինչպես նաեւ Կողմերի ազգային օրենսդրությամբ:

ՅՈՒՐԱԾ 7

1. Փոխադրողը պատասխանատվություն է կրում փոխադրման ժամանակ ուղեւորի առողջությանը կամ ուղեբեռին հասցված վնասի համար՝ կապված.

ուղեւորի մահվան, մարմնական վնասվածքների կամ նրա առողջությանը հասցված ցանկացած այլ վնասի հետ՝ անկախ պատահարի վայրի եւ ժամանակի (փոխադրման, իջեցման, նստեցման, կամ ուղեբեռի բեռնման, բեռնաթափման ընթացքում),

ուղեբեռի լրիվ կամ մասնակի կորստի կամ նրա վնասվածքի հետ:

Փոխադրողը ուղեբեռի համար պատասխանատվություն է կրում այն փոխադրման համար ընդունելու պահից մինչեւ դրա տեղ հասցնելը կամ ի պահ հանձնելը՝ ուղեւորների

փոխադրման Կանոններով նախատեսված կարգով:

2. Փոխադրողը պատասխանատվություն է կրում ինչպես իր գործողությունների, այնպես էլ այլ անձանց գործողությունների համար, որոնց ծառայությանը նա դիմում է փոխադրման պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարման համար, երբ այդ անձինք գործում են իրենց պարտավորությունների շրջանակներում:

ՅՈՒՐԱԾ 8

1. Փոխադրողն ազատվում է ուղեւորին հասցված վնասի կամ ուղեբեռի վնասվածքի համար պատասխանատվությունից, եթե պատահարի պատճառը հանդիսացել են այն հանգամանքները, որոնց հետեւանքը փոխադրողը, չնայած ձեռնարկված միջոցների, չէր կարող կանխատեսել եւ խուսափել, ինչպես նաեւ, եթե վնասը կամ վնասվածքը առաջացել են շուտ փչացող կամ փոխադրման համար արգելված նյութեր, միջոցներ կամ առարկաներ պարունակող ուղեբեռի թերության պատճառով:

2. Փոխադրողն իր վրայից պատասխանատվությունը հանելու համար չի կարող վկայակոչել վարորդի ֆիզիկական կամ հոգեկան թերությունները, ինչպես նաեւ ավտոբուսի անսարքությունը:

ՅՈՒՐԱԾ 9

Միեւնույն իրադարձության կապակցությամբ փոխադրողի կողմից վճարվելիք վնասի կամ վնասվածքի փոխհատուցման ընդհանուր գումարը սահմանում են Կողմերի դատարանները, իրենց ազգային օրենսդրության համապատասխան:

ՅՈՒՐԱԾ 10

1. Փոխադրողը լրիվ կամ մասնակի ազատվում է պատասխանատվությունից, եթե վնասը կամ վնասվածքը առաջացել են ուղեւորի մեղքով:

2. Եթե վնասը կամ վնասվածքը հասցվել է երրորդ անձի գործողություններով կամ բացթողումներով, ապա փոխադրողը պատասխանատու է ամբողջ վնասի կամ վնասվածքի համար: Ընդ որում, նրան իրավունք է վերապահվում հայցապահանջ ներկայացնել այդ երրորդ անձին, բացառությամբ սույն Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

ՅՈՒՐԱԾ 11

Փոխադրողն իրավունք չունի վկայակոչել սույն Կոնվենցիայի՝ նրա պատասխանատվությունը լրիվ կամ մասամբ բացառող դրույթները, եթե նրա կողմից ուղեւորին, ուղեբեռին կամ գույքին վնասը կամ վնասվածքը հասցվել է այն պետության ճանապարհային երթուղեկության Կանոնների խախտման արդյունքում, որի տարածքով իրականացվում է փոխադրումը, կամ ուղեւորների փոխադրման Կանոնների խախտման արդյունքում: Նույնը վերաբերում է այն անձին, որի գործողությունների համար փոխադրողը պատասխանատու է սույն Կոնվենցիայի 7-րդ հոդվածին համապատասխան:

ՅՈՒՐԱԾ 12

Սույն Կոնվենցիայում հիշատակված վնասը կամ վնասվածքը հաշվառվում են այն պետության ազգային արժույթով, որի տարածքում դրանք հասցվել են:

ԳԼՈՒԽ 4
ԲՈՂՈՔՆԵՐ ԵՎ ՅԱՅՅԵՐ

ՅՈՒՐԱԾ 13

1. Ուղեւորն իրավունք ունի պահանջ ներկայացնել փոխադրողին ուղեւորի կամ ուղեբեռի նշանակված վայր ժամանելու օրվանից յոթ օրվա ընթացքում:

2. Ուղեւորի հիվանդության դեպքում, երբ նա առողջության պատճառով ի վիճակի չէ պահանջ ներկայացնելու, այդ ժամկետը կարող է երկարաձգվել մինչեւ ուղեւորի ապաքինումը:

ՀՈՂՎԱԾ 14

1. Միջազգային հաղորդակցման ժամանակ ուղեւորների եւ ուղեբեռի փոխադրման հետ կապված բոլոր վիճելի հարցերի դեպքում ուղեւորն իրավունք ունի, քաղաքացիական, ընտանեկան եւ քրեական գործերով իրավական օգնության եւ իրավական հարաբերությունների մասին 1993 թվականի հունվարի 22-ի՝ Կոնվենցիայի 20-րդ հոդվածին համապատասխան, դիմել այն պետության դատարաններ, որի տարածքում տեղի է ունեցել վնաս կամ վնասվածք առաջացնող պատահարը, կամ որոնք գտնվում են փոխադրողի կամ ուղեւորի իրավաբանական հասցեում, ինչպես նաեւ ուղեւորի մեկնման կամ ժամանման կետերում:

2. Դատարանն իրավունք չունի Կողմերի քաղաքացիներից պահանջել գրավ, դատական ծախսերի վճարումն ապահովելու համար, որոնք կապված են սույն Կոնվենցիայի գործողության տակ ընկնող փոխադրումներին վերաբերող հայցի ներկայացման հետ:

ՀՈՂՎԱԾ 15

1. Ուղեւորի առողջությանը հասցված վնասի կապակցությամբ հայցի ներկայացման իրավունքը պահպանվում է երեք տարվա ընթացքում:

Վաղեմության ժամկետը հաշվվում է այն օրվանից, երբ անձը, որին հասցվել է վնաս, իմացել է կամ պետք է իմանար այդ մասին:

2. Ուղեբեռի լրիվ կամ մասամբ կորստի կամ դրա վնասվածքի կապակցությամբ հայցի ներկայացման իրավունքը պահպանվում է մեկ տարվա ընթացքում:

Վաղեմության ժամկետը հաշվվում է տրանսպորտային միջոցի՝ ուղեւորի նշանակման վայր ժամանելու օրվանից կամ, չժամանելու դեպքում, այն օրվանից, երբ այն պետք է ժամաներ այնտեղ:

3. Գրավոր տեսքով պահանջների ներկայացումը կասեցնում է վաղեմության ժամկետի ընթացքը, մինչեւ որ փոխադրողը գրավոր կտեղեկացնի պահանջի չբավարարման մասին՝ դրան կցելով համապատասխան փաստաթղթեր: Ներկայացված պահանջի մասնակի բավարարման դեպքում, վաղեմության ժամկետի ընթացքը վերսկսվում է միայն պահանջի այն մասի նկատմամբ, որը մնում է վեճի առարկա: Պահանջում շարադրված փաստերի ապացուցման կամ նրա պատասխանի, ինչպես նաեւ գործին առնչվող փաստաթղթերի վերադարձման հետ կապված ծախսերը կրում է այն Կողմը, որը վկայակոչում է այդ փաստերը: Նույն հարցով հետագա պահանջների ներկայացումը չի ընդհատում վաղեմության ժամկետը, եթե փոխադրողը չի համաձայնում քննարկել դրանք:

ՀՈՂՎԱԾ 16

1. Փոխադրման պայմանագրի այն պայմանը, որը ուղղակիորեն կամ անուղղակիորեն թույլ է տալիս սույն Կոնվենցիայի դրույթներից շեղում, ճանաչվում է ուժ չունեցող: Այդպիսի պայմանի անվավերությունը չի բերում փոխադրման պայմանագրի այլ պայմանների անվավերության:

2. Անվավեր է համարվում ցանկացած պայման, որի համաձայն փոխադրողին վերապահվում են ապահովագրման պայմանագրից բխող իրավունքներ:

ԳԼՈՒԽ 5 ԵԶՐԱՓՈՎԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈՂՎԱԾ 17

Սույն Կոնվենցիան չի շոշափում այլ միջազգային պայմանագրերի դրույթները, որոնց մասնակից են հանդիսանում Կողմերը:

ՅՈՒՐԱԾ 18

Սույն Կոնվենցիայում Կողմերի ընդհանուր համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ:

ՅՈՒՐԱԾ 19

Սույն Կոնվենցիայի կիրառման կամ մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են շահագրգիռ Կողմերի միջեւ խորհրդակցությունների կամ բանակցությունների միջոցով:

ՅՈՒՐԱԾ 20

Սույն Կոնվենցիան բաց է նրա նպատակները եւ սկզբունքները կիսող պետությունների կողմից դրան միանալու համար, այդպիսի միացման մասին փաստաթղթերը ավանդապահին հանձնելու միջոցով: Միացումն ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից միացման մասին հաղորդումը ստանալու օրվանից:

ՅՈՒՐԱԾ 21

Սույն Կոնվենցիան այն ստորագրող Կողմերի կողմից ենթակա է վավերացման, իրենց ներքին ընթացակարգերին համապատասխան եւ ուժի մեջ կմտնի երրորդ վավերագիրը ավանդապահին հանձնելու օրվանից: Ավելի ուշ վավերացրած Կողմերի համար այն ուժի մեջ կմտնի իրենց վավերագրերը ավանդապահին հանձնելու օրվանից:

ՅՈՒՐԱԾ 22

Սույն Կոնվենցիան գործում է դրա ուժի մեջ մտնելու օրվանից հինգ տարվա ընթացքում: Այդ ժամկետը լրանալուց հետո Կոնվենցիան ինքնաբերաբար կերկարաձգվի ամեն անգամ հինգ տարով, եթե Կողմերն այլ որոշում չընդունեն:

ՅՈՒՐԱԾ 23

Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Կոնվենցիայից՝ դուրս գալուց առնվազն վեց ամիս առաջ այդ մասին գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին:

Կատարված է Բիշկեկ քաղաքում 1997 թվականի հոկտեմբերի 9-ին, մեկ ընօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր Զարտուղարությունում, որը սույն Կոնվենցիան ստորագրած յուրաքանչյուր պետության կողարկի դրա հաստատված պատճենը:

Հավելված
Ուղեւորների եւ ուղեբեռի
միջազգային ավտոմոբիլային
փոխադրումների մասին
Կոնվենցիային կից

ԿԱՆՈՆՆԵՐ

ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ
ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԵԲԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների միջազգային հաղորդակցությունում ավտոմոբիլային տրանսպորտով ուղեւորների եւ ուղեբեռի փոխադրումների Կանոնները (այսուհետ՝ ուղեւորների փոխադրման Կանոններ) մշակվել են ուղեւորների եւ ուղեբեռի միջազգային ավտոմոբիլային փոխադրումների մասին Կոնվենցիային համապատասխան եւ կանոնակարգում են մշտական եւ ոչ մշտական միջազգային ավտոբուսային հաղորդակցության ժամանակ ուղեւորների եւ ուղեբեռի ավտոբուսով փոխադրման գործընթացը:

2. Ուղեւորների փոխադրման սույն Կանոնները տարածվում են Կողմերի ուղեւորների ու փոխադրողների վրա եւ պարտադիր են նրանց համար:

3. Ուղեւորների փոխադրման սույն Կանոնները նախատեսում են փոխադրման գործընթացի կազմակերպման եւ հսկողության համակարգը, ինչպես նաեւ ուղեւորների եւ փոխադրողների իրավունքները եւ պարտականությունները:

4. Ավտոբուսներով միջազգային կանոնավոր հաղորդակցության ժամանակ ուղեւորների եւ ուղեբեռի փոխադրման կազմակերպման հիմք է հանդիսանում ուղեւորների եւ ուղեբեռի կանոնավոր միջազգային փոխադրման համատեղ գործունեության մասին պայմանագիրը (այսուհետ՝ համատեղ գործունեության մասին Պայմանագիր), որը կնքվում է Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների փոխադրողների կողմից, սահմանում է Համագործակցության պետությունների տրանսպորտի համապատասխան իրավասու մարմինների հետ նախապես համաձայնեցված սակագները եւ երթեւեկության չվացուցակը:

5. Ուղեւորների փոխադրման Կանոնների մեջ օգտագործված հասկացություններն ունեն հետեւյալ նշանակությունները.

"ավտոկայարան"՝ շինությունների համալիր, որն ապահովում է բնակելի վայրերում ուղեւորների սպասարկումը եւ ներառում է ավելի քան 75 մարդ տեղավորող սպասասրահով եւ տոմսարկղերով շինությունը, ուղեւորների նստեցման եւ իջեցման կառամատույց, ավտոբուսների կանգառների տարածքներ, ավտոբուսի մաքրման եւ ստուգման ուղեկալներ,

"ավտոկայան"՝ շինությունների համալիր, որն ապահովում է բնակելի վայրերում ուղեւորների սպասարկումը եւ ներառում է ավելի քան 75 մարդ տեղավորող սպասասրահով եւ տոմսարկղերով շինությունը, ուղեւորների նստեցման եւ իջեցման կառամատույց, ավտոբուսների կանգառների տարածքներ,

"ծեռքի ուղեբեռ"՝ ուղեւորի կողմից անվճար փոխադրվող իրերը, որոնց քաշը չի գերազանցում 20 կգ-ը, իսկ չափսերը՝ 600 x 400 x 200 մմ,

"վարորդ"՝ ավտոտրանսպորտային միջոցը վարող ֆիզիկական անձ, կամ անձ, որի վրա փոխադրողի անունից եւ հանձնարարությամբ դրվել են ավտոմեքենայի վարման եւ բեռը ստացողներին, ուղարկողներին կամ ուղեւորներին սպասարկելու գործառույթները,

"փոխադրման պայմանագիր"՝ փոխադրողի եւ ուղեւորի միջեւ կնքված տրանսպորտային ծառայությունների մատուցման համաձայնագիր,

"երթուղի"՝ որոշակի կետերի միջեւ ավտոտրանսպորտային միջոցի երթեւեկության սահմանված ճանապարհը,

"ճոճանակային փոխադրում"՝ մի խումբ ուղեւորների փոխադրում, որն իրականացվում է որոշակի ժամկետներում, մի պետության տարածքից մյուս պետության տարածքի ժամանակավոր կայանատեղի, նույն փոխադրողի տվյալ խմբի ավտոբուսներով հետագա վերադարձմամբ մեկնման սկզբնական պետություն,

"ոչ կանոնավոր փոխադրում"՝ փոխադրում, որի ժամանակ դրա իրականացման պայմանները սահմանվում են յուրաքանչյուր առանձին դեպքում պատվիրատուի եւ փոխադրողի միջեւ համաձայնեցմամբ,

"կանոնավոր փոխադրում"՝ ուղեւորների եւ ուղեբեռի փոխադրում փոխադրման պայմանագրով, որտեղ սահմանված են փոխադրման պայմանները, սակագները եւ ավտոբուսների երթեւեկության չվացուցակը՝ ուղեւորների նստեցման եւ իջեցման համար կանգառների նշումով երթուղիներով,

"երթեւեկության չվացուցակը"՝ գրաֆիկ, աղյուսակ, որոնք տեղեկություններ են պարունակում չվերթի իրականացման ժամանակի, վայրի եւ հաջորդականության մասին, "չվերթ"՝ ավտոբուսի ճանապարհը երթուղու սկզբնական կետից մինչեւ վերջնականը,

"թույլատրող համակարգ"՝ նորմատիվ, տեխնոլոգիական փաստաթղթերի ամբողջություն, որոնք ապահովում են միջպետական ավտոբուսային փոխադրումների իրականացումը,

"երթուղիների սխեմա (երթուղիներ)"՝ երթուղիների (երթուղու) գրաֆիկական պատկերը պայմանական նշաններով,

"սակագին"՝ ուղեւորների եւ ուղեբեռի փոխադրման համար սահմանված վճարի չափը՝ հեռավորության կամ ժամանակի միավորի համար,

"տրաֆարետ"՝ ուղեւորների համար ավտոբուսների աշխատանքի ռեժիմի եւ երթուղու մասին տեղեկությամբ ցուցատախտակ,

"ֆորմուլյար (ճանապարհային թերթիկ)"՝ փաստաթուղթ, որը սահմանում է փոխադրման տեսակը եւ պարունակում է երթեւեկության երթուղու նկարագիրը եւ ուղեւորների ցուցակը,

"տրանսպորտի իրավասու մարմին"՝ պետության տրանսպորտի մարմին, որը փոխադրողին տալիս է համաձայնեցված երթուղով ուղեւորների միջազգային ավտոմոբիլային փոխադրումների իրավունքի թույլտվություն,

"արտոնագիր"՝ Կողմի լիազորված պետական մարմնի կողմից տրված փաստաթուղթ, որը հավաստում է սահմանված ժամկետում միջազգային հաղորդակցության ուղեւորային ավտոմոբիլային փոխադրումներ իրականացնելու իրավունքը:

2. ՈՐԴԵՎՈՐՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6. Ավտոտրանսպորտով ուղեւորների միջազգային փոխադրումներ կատարելու արտոնագրեր տալը, երկարացնելը եւ չեղյալ հայտարարելը իրականացվում է ավտոբուսի գրանցման պետության գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Փոխադրման թույլ չեն տրվում.

ուղեբեռում եւ ձեռքի ուղեբեռում պայթուցիկ, թունավորող, հրդեհավտանգ, քայքայիչ, ռադիոակտիվ, քիմիական, թունավոր, օզոնը քայքայող նյութեր եւ այդպիսիք պարունակող իրեր, թմրանյութեր, հոգեմեդիկամենտներ եւ գարշահոտ նյութեր, շարժակազմը, ուղեւորների հագուստները, պահպանման խցիկները եւ այնտեղ գտնվող իրերը աղտոտող ուղեբեռ,

ուղեւորների փոխադրման սույն Կանոններով սահմանված քաշի եւ չափսի նորմերը գերազանցող ուղեբեռ, ինչպես նաեւ առարկաներ, որոնց փոխադրումը արգելված է այն պետության օրենսդրությամբ, որտեղ այն իրականացվում է:

8. Միջազգային հաղորդակցման ուղեւորների կանոնավոր փոխադրման երթուղիներ բացելու համար փոխադրողին անհրաժեշտ է.

մյուս պետության, որտեղով անցնում է երթուղին, իր գործընկերոջ հետ համաձայնեցնել երթուղու բացման մտադրությունը,

իր պետության տրանսպորտի իրավասու մարմին ուղարկել հայտ՝ կցելով հետեւյալ փաստաթղթերը՝ համատեղ գործունեության Պայմանագիրը, միջազգային հաղորդակցության ուղեւորափոխադրումներ իրականացնելու իրավունք տվող արտոնագրի պատճենը, ինչպես նաեւ ձեռնարկության գրանցման վկայականը՝ իր ռեկվիզիտներով, երթուղու երթեւեկության չվացուցակը, երթուղու սխեմաները սահմանային անցումների նշումով, փոխադրման սակագները, երթուղիներում վարորդների աշխատանքի եւ հանգստի ռեժիմը:

Պետության տրանսպորտի իրավասու մարմինը, որին հայտ է ներկայացվել, ուղարկում է թույլտվություն ստանալու մասին միջնորդությունը եւ երթուղու բացման վերաբերյալ հայտը այն պետության տրանսպորտի իրավասու մարմնին, որի տարածքով անցնում է երթուղին՝ կցելով վերոհիշյալ փաստաթղթերը:

Պետության տրանսպորտի իրավասու մարմինը, որին հայտ է ներկայացվել, այն բանից հետո, երբ բոլոր պետություններից, որոնց տարածքով անցնում է երթուղին, ստանում է թույլտվություններ՝ տալիս է դրանք փոխադրողին:

Փոխադրողը ձեւակերպում է երթուղու սխեման եւ ներկայացնում համաձայնեցման

այն պետությունների տրանսպորտի իրավասու մարմիններին, որոնց տարածքով անցնում է երթուղին:

Երթուղու, կանգառների, երթելեկության չվացուցակի փոփոխությունները, ինչպես նաև երթուղու փակումը կատարվում է այն պետությունների համապատասխան իրավասու մարմինների հետ նախնական համաձայնեցումից հետո, որոնց տարածքով անցնում է երթուղին:

9. Տրանսպորտի իրավասու մարմինները Համագործակցության պետությունների իրավասու մարմինների հետ համաձայնեցնում են կանոնավոր հաղորդակցության ավտոբուսների սահմանը հատելու ժամանակը եւ տալիս են անցագիր՝ սահմանն արտահերթ անցնելու համար:

10. Ուղեւորների միջազգային փոխադրման համար նախատեսված կանոնավոր հաղորդակցության ավտոբուսները ապահովվում են առջելի եւ կողմնային տրաֆարետներով, որոնց վրա նշված է երթուղու սկզբնական եւ վերջնական կետերի անվանումները:

11. Միջազգային հաղորդակցության ավտոբուսների մեկնումն ու ժամանումն իրականացվում է ավտոկայարանից (ավտոկայանից):

Ավտոկայարանում (ավտոկայանում) տեղեկություն է տրամադրվում փոխադրումների կանոնների, ավտոբուսների երթելեկության չվացուցակի, ուղեւորների ուղեւորության եւ ուղեբեռի փոխադրման պայմանների ու արժեքի, ավտոկայարանի ծառայությունների, տրանսպորտային այլ միջոցների աշխատանքի մասին:

12. Փոխադրումների սակագները համաձայնեցվում են փոխադրողների հետ:

13. Տոմսը պետք է ներառի հետևյալ հիմնական տվյալները.

ժամանման եւ մեկնման ավտոկայարանի (ավտոկայանի) անվանումը,

տոմսի համարը (նշված տպագրության միջոցով),

ուղեւորության արժեքը,

տոմսի տրման ամսաթիվը,

մեկնման ամսաթիվը եւ ժամանակը,

նստատեղի համարը,

տոմսի տրման վայրը,

չվերթի համարը:

Տոմսերի վաճառքը նշվում է տոմսահաշվառման թերթիկում:

14. Ուղեւորության տոմսերի նախնական վաճառքը, ուղեբեռի տեղափոխման ձեւակերպումն իրականացվում է ավտոկայարանի (ավտոկայանի) առանձին դրամարկղերում եւ տոմսերի նախնական վաճառքի համար նախատեսված առանձին տեղակայված տոմսարկղերում:

Ավտոբուսների մեկնման օրը տոմսերը պետք է վաճառվեն երթուղիների սկզբնական կետերի ավտոկայարանների (ավտոկայանների) դրամարկղերում, իսկ միջանկյալ կետերում՝ ավտոբուսում ազատ տեղերի առկայության մասին տեղեկություն ստանալիս:

Տոմսը վավեր է համարվում միայն նրանում նշված մեկնման օրվա եւ ավտոբուսի չվերթի համար:

Տոմսի արտահերթ ձեռքբերման իրավունք է տրամադրվում քաղաքացիներին՝ այն պետության գործող օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում իրականացվում է տոմսի վաճառքը:

15. Միջազգային երթուղիներում ավտոբուսով փոխադրվող ուղեւորների քանակը համապատասխանում է արտադրող գործարանի կողմից տվյալ մոդելի ավտոբուսի համար սահմանված քանակին:

16. Միջազգային հաղորդակցության ավտոբուսի վարորդը եւ ուղեւորները պետք է ունենան պատշաճ կերպով ձեւակերպված սահմանն անցնելու իրավունք տվող փաստաթղթեր:

17. Սահմանն անցնելիս ուղեւորների փաստաթղթերը, ուղեբեռը, ձեռքի բեռը, տարադրամը եւ թանկարժեք իրերը պետք է ձեւակերպվեն այն պետության գործող սահմանային եւ մաքսային օրենսդրության պահանջներին համապատասխան, որի տարածքով իրականացվում է փոխադրումը:

18. Բեռը ուղեւորին տրված է համարվում այն դեպքում, եթե փոխադրողը փոխանցել է այն բեռի անդորրագիր ներկայացրած անձին:

19. Եթե բեռնի անդորրագիրը բացակայում է, ապա փոխադրողն իրավունք ունի փոխանցել բեռն այն անձին, որն ապացուցել է բեռնի իրեն պատկանելությունը: Եթե բեռն առանց անդորրագրի ստանալուն հավակնող անձը բավարար ապացույցներ չի ներկայացնում՝ բեռն իրեն պատկանելու մասին, փոխադրողն իրավունք ունի պահանջել նրանից մուծելու համապատասխան գրավ, որը վերադարձվում է այն մուծելուց մեկ տարի անց:

20. Բեռն, որը չի պահանջվել ավտոբուսի վերջնական կետ հասնելուց հետո, անկախ նրանից, թե դրա համար տրված է բեռնի անդորրագիր, թե ոչ, հանձնվում է պատասխանատու պահման, որի համար բեռն ստանալուց ուղեւորից գանձվում է գումար: Փոխադրողը կարող է հանձնարարել բեռնի պահպանումը երրորդ անձին, որն իրավունք ունի վարձատրություն ստանալ դրա պահպանման համար:

Բեռնի պահպանման կարգը կարգավորվում է այն պետության գործող օրենսդրությամբ, որտեղ իրականացվում է դրա պահպանումը:

21. Բեռն, որը հանձնման դիմում ներկայացնելուց հետո տասնչորս օրվա ընթացքում չի հասցվել ուղեւորին, համարվում է կորած:

Եթե կորած համարվող բեռն գտնվել է ուղեւորի կողմից այն հանձնելու պահանջ ներկայացնելուց հետո տարվա ընթացքում, փոխադրողը տեղեկացնում է այդ մասին ուղեւորին: Ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում ուղեւորը կարող է պահանջել բեռն առաքել կամ իր մեկնման, կամ նշանակման կետը:

3. ՈՒՂԵՎՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

23. Միջազգային ավտոբուսային փոխադրումների ժամանակ ուղեւորը պարտավոր է տոմս գնել եւ վճարել ուղեբեռնի տեղափոխման համար փոխադրողի կողմից սահմանված ուղեւորության արժեքին համապատասխան, զբաղեցնել տոմսում նշված տեղը, պահպանել տոմսը մինչեւ ուղեւորության վերջը եւ ներկայացնել այն հսկող անձանց, ժամանել ավտոբուսի մեկնման վայրը, տվյալ պետության տարածքում գործող կանոններին համապատասխան,

պահպանել սահմանի անցման համար սահմանված այն պետության կանոնները, որի տարածքով իրականացվում է միջազգային փոխադրումը,

ունենալ բեռնի անդորրագիր եւ ներկա լինել իրեն պատկանող բեռնի եւ այլ գույքի ստուգման ժամանակ, ինչպես նաեւ իրեն պատկանող նյութերից էքսպրես-անալիզի համար համապատասխան մարմինների կողմից նմուշների եւ փորձանմուշների վերցման ժամանակ:

24. Միջազգային երթուղու ուղեւորն իրավունք ունի.

իր հետ անվճար փոխադրել մինչեւ հինգ տարեկան մեկ երեխա՝ առանց առանձին տեղի հատկացման, 5-ից 10 տարեկան՝ տոմսի լրիվ արժեքի 50% զեղչով՝ առանձին տեղի հատկացմամբ, մինչեւ 10 տարեկան երկու եւ ավել երեխաների փոխադրման ժամանակ նրանցից մեկը փոխադրվում է անվճար, մյուսները՝ տոմսի լրիվ արժեքի 50% զեղչով՝ առանձին տեղի հատկացմամբ,

տեղափոխել իր հետ մեկ ձեռքի բեռ, փոքր կենդանիներ եւ թռչուններ վանդակներում անվճար, կենդանիներին (շներ, կատուներ) փոխադրողի կողմից սահմանված վճարով՝ նստելուց ներկայացնելով փոխադրվող կենդանիների համար այն պետության անասնաբուժական ծառայության կողմից տրված փաստաթուղթ, որտեղից դուրս է բերվում կենդանին,

ստանալ տեղին եւ ճշգրիտ տեղեկություն տրամադրվելիք ծառայությունների ցանկի, դրանց տրամադրման պայմանների եւ երթուղեկության չվացուցակի վերաբերյալ,

պահանջել միջազգային փոխադրման ժամանակ ուղեւորի առողջությանը կամ նրա բեռին հասցված վնասի հատուցում,

պահանջել փոխադրողներից փոխադրման պայմանագրի կատարումը,

հայտարարել բեռնի արժեքավորությունը՝ այն փոխադրման հանձնելու ժամանակ:

Հայտարարված բեռնի արժեքավորության գումարը պետք է սահմանվի ուղեւորի կողմից առաքող պետության ազգային արժույթով եւ նշվի ուղեբեռնի անդորրագրում: Անդորրագիրը պետք է պահպանվի ուղեբեռնի եւ իրեն պատկանող այլ գույքի փոխադրման եւ ստուգման ողջ ընթացքում:

25. Ուղեւորին կարող են մերժել փոխադրումը.

ազատ տեղերի բացակայության դեպքում,
ուղեբեռի մաքսային ձեւակերպման բացակայության դեպքում,
տեղափոխման համար արգելված կամ անվանացուցակով, քաշով կամ չափսերով
սահմանված նորմերին չհամապատասխանող բեռների տեղափոխման փորձի դեպքում:

26. Ուղեւորն իրավունք չունի.

ընթացքի ժամանակ խանգարել վարորդին կամ շեղել նրա ուշադրությունը
ավտոբուսի վարումից,

բացել ավտոբուսի դռները մինչեւ դրա լրիվ կանգնելը,

փոփոխություններ մտցնել տոմսի եւ ուղեւորության այլ փաստաթղթերի մեջ եւ
փոխանցել դրանք այլ ուղեւորների,

տեղափոխել ուղեբեռ նստատեղի վրա,

օգտվել վթարային սարքավորումներից առանց անհրաժեշտության, բացի
նախատեսված դեպքերից:

27. Ուղեւորը պատասխանատու է իր մեղքով հասցված վնասի համար, այդ թվում՝
փոխադրողին պատկանող ավտոբուսի կամ սարքավորման վնասման կամ աղտոտման համար,
ինչպես նաեւ ուղեւորների փոխադրման սույն Կանոնների խախտման համար:

Չատուցման չափը որոշվում է հասցված վնասի մեծությամբ:

4. ՓՈՒՍԱԴՐՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

28. Փոխադրողը պարտավոր է.

ապահովել միջազգային հաղորդակցության տոմսերի նախնական վաճառք,
մինչեւ մեկնումը ծանոթացնել վարորդին երթուղու սխեմայի հետ եւ հանձնել

նրան երթուղու չվացուցակը,

ժամանակին տրամադրել ավտոբուսը՝ պատշաճ տեխնիկական եւ սանիտարական
վիճակում,

ապահովել ուղեւորի անվտանգ, հարմարավետ ուղեւորությունը ավտոբուսով,
փոխադրման պայմանագրին եւ հաստատված չվացուցակին համապատասխան,

ավտոբուսի տեխնիկական անսարքության հետեւանքով ուղեւորության դադարեցման
դեպքում ապահովել ուղեւորների ուղեւորությունը մինչեւ երթուղու վերջնակետը
առանց նրանց լրացուցիչ ծախսերի,

ուղեւորին մատուցել փոխադրման պայմանագրով նախատեսված լրացուցիչ
ծառայություններ:

29. Փոխադրողն իրավունք ունի.

չեղյալ հայտարարել ավտոբուսի չվերթը այն հանգամանքներից ելնելով, որոնք նա
չէր կարող կանխատեսել կամ կանխել՝ նայած բոլոր ձեռնարկված միջոցներին: Այս
դեպքում փոխադրողը ուղեւորին է վերադարձնում տոմսի արժեքը՝ այն ներկայացնելուց
հետո, ինչպես նաեւ ուղեւորի կողմից լրացուցիչ ծառայությունների համար վճարված
գումարը: Բացի այդ, վերադարձման ենթակա են նաեւ համապատասխան փաստաթղթերով
հաստատված ուղեւորի կրած ծախսերը նրա՝ տոմսում նշված ուղեւորության սկզբի վայր
հնարավոր վերադարձի եւ դրանից ամենաեժան տրանսպորտային միջոցով մեկնելու հետ
կապված: Տոմսի եւ վճարված լրացուցիչ ծառայությունների արժեքի վերադարձման
պայմանները որոշվում է համատեղ գործունեության Պայմանագրով,

իրենց պետության տարածքում սահմանափակել կամ դադարեցնել միջազգային
փոխադրումները համաճարակի, տարերային աղետի կամ անհաղթահարելի ուժի
(Փորս-մաժոր) հանգամանքների դեպքում,

ուղեբեռի անդորրագրում նշել ուղեբեռի կամ դրա փաթեթավորման վիճակը՝
ուղեւորի համաձայնությամբ: Եթե ուղեւորը չի հաստատում նշումը, ապա փոխադրողը
կարող է հրաժարվել ուղեբեռը փոխադրման ընդունելուց: Այն դեպքում, եթե ուղեբեռը
փոխադրողի կողմից ընդունվել է առանց նշման, համարվում է, որ ուղեբեռն
ընդունվել է պատշաճ վիճակում եւ պատշաճ փաթեթավորմամբ:

5. ՎԱՐՈՐԴԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

30. Միջազգային փոխադրումներ կատարող ավտոբուսի վարորդը պարտավոր է.

ղեկավարվել ճանապարհային երթեւեկության Կանոններով, ավտոբուսի տեխնիկական շահագործման կանոններով, պաշտոնական հրահանգով եւ կատարել կարգավարական ծառայության օպերատիվ կարգադրությունները,

պահպանել այն պետությունների սահմանային, մաքսային, սանիտարակարանտինային եւ հսկողության այլ տեսակների կանոնները, որոնց տարածքով իրականացվում է միջազգային փոխադրումը,

ունենալ տրանսպորտային միջոցների գրանցման փաստաթղթեր եւ վարորդական վկայական, որը համապատասխանում է ճանապարհային երթեւեկության մասին 1968 թվականի նոյեմբերի 8-ի՝ Կոնվենցիայի պահանջներին,

կազմակերպել, ժամանակին ծանուցել եւ պատրաստել ուղեւորներին սահմանն անցնելիս ստուգում անցնելու համար,

սահմանն անցնելիս ստուգման համար ներկայացնել.

ա) կանոնավոր փոխադրումների դեպքում՝ վարորդական իրավունքի վկայական, ճանապարհային (ուղեւորության) թերթիկ, տոմսահաշվառային փաստաթղթեր, թույլտվության բնօրինակը, ավտոբուսի երթեւեկության չվացուցակը, արտոնագիրը, պետական սահմանն անցնելու իրավունք տվող փաստաթղթեր,

բ) ոչ կանոնավոր փոխադրումների դեպքում՝ վարորդական իրավունքի վկայական, ճանապարհային (ուղեւորության) թերթիկ, արտոնագիր, անկանոն փոխադրման թույլտվություն (եթե դա նախատեսված է միջազգային ավտոմոբիլային փոխադրումների մասին համաձայնագրերով), պետական սահմանն անցնելու իրավունք տվող փաստաթղթեր,

միջազգային ավտոմոբիլային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմերի աշխատանքին վերաբերող համաձայնագրի համաձայն, հաստատել վարորդի աշխատանքի ռեժիմը,

շարժվել սահմանված երթուղով եւ կատարել ավտոբուսի երթեւեկության գրաֆիկը, ուղեւորների նստեցման ժամանակ ստուգել ուղեւորության եւ ուղեբեռի տեղափոխման տոմսերի առկայությունը եւ համապատասխանությունը,

ընդունել եւ տեղավորել ուղեբեռը, որը նախատեսված է փոխադրման համար, չվացուցակով նախատեսված կանգառներում ուղեւորներին տալ ուղեբեռը,

հայտարարել կանգառների անվանումները եւ կանգ առնման ժամանակը,

միջազգային փոխադրումների նկատմամբ հսկողության իրավունք ունեցող անձանց ազդանշանով ավտոբուսը կանգնեցնել, կատարել նրանց ցուցումները եւ օգնել ստուգում կատարելու ժամանակ,

տրանսպորտային միջոցի կանգ առնելուց հետո կատարել իջեցումը միայն իջեցման հրապարակից, իսկ այդպիսի հրապարակի բացակայության դեպքում՝ մայթից կամ ճամփեզրից: Եթե դա անհնար է, ապա երթեւեկելի մասի կողմից՝ պայմանով, որ դա անվտանգ կլինի եւ երթեւեկության այլ մասնակիցների համար խոչընդոտ չի հանդիսանա,

ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում, հնարավորության սահմաններում, օգնություն ցուցաբերել տուժածներին եւ իշխանության համապատասխան մարմիններին տեղեկացնել կատարվածի մասին,

ձեռնարկել միջոցներ կարիք ունեցող ուղեւորին առաջին բժշկական օգնության ցուցաբերելու, ինչպես նաեւ նրան անհապաղ օգնության մոտակա կետը տեղափոխելու կապակցությամբ: Եթե ուղեւորը հիվանդության պատճառով դադարեցնում է ուղեւորությունը, ապա նրա ուղեբեռը հանձնվում է պահպանման սույն Կանոնների 20 կետով նախատեսված կարգի համաձայն,

երթեւեկությունը սկսել ավտոբուսի դռները ամբողջապես փակելուց հետո եւ բացել դրանք միայն կանգառներում:

31. Վարորդն իրավունք ունի.

ուղեւորության չթույլատրել կամ իջեցնել մոտակա կանգառում փոխադրման պայմանագիրը խախտած կամ իր վարքի, հիվանդության եւ այլ պատճառների հետեւանքով շրջապատի ուղեւորների համար վտանգ ներկայացնող ուղեւորին,

պահանջել ուղեւորներից նրանց պարտականությունների կատարում,

բաց չթողնել ուղեբեռը, եթե չի ներկայացվել ուղեբեռային անդորրագիր,

ներկա գտնվել ավտոբուսի եւ ուղեբեռի զննման ժամանակ:

6. ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

32. Միջազգային հաղորդակցման ավտոբուսի մեկնումից ոչ ուշ, քան երկու ժամ առաջ ավտոկայանի (ավտոկայարանի) դրամարկղ տոմսի վերադարձման դեպքում ուղեւորին վերադարձվում է տոմսի արժեքը՝ տոմսի նախնական վաճառքի համար նախատեսված գանձման հանումով:

Այդ ժամկետից ուշ, բայց ոչ պակաս, քան երթուղույնի չվացուցակով նախատեսված ավտոբուսի մեկնումից 15 րոպե առաջ, տոմսի վերադարձման դեպքում, ուղեւորին վերադարձվում է տոմսի արժեքը՝ փոխադրողի կողմից սահմանված չափով:

Տոմսի կորստի դեպքում ուղեւորին չի թույլատրվում ավտոբուս նստել, տոմսի արժեքը չի վերադարձվում, կրկնօրինակ չի տրվում, բողոքներ չեն ընդունվում:

33. Եթե մի պետության փոխադրողի ավտոբուսը մյուս պետության տարածքով երթուղույնի ընթացքում որեւէ պատճառով չի կարող շարունակել երթուղույնը, ապա այդ պետության Միջազգային ավտոմոբիլային փոխադրողների ընկերությունը նշված ավտոբուսի վարորդի խնդրանքով փոխադրողի հաշվին ցույց է տալիս անհրաժեշտ օժանդակությունը տվյալ ավտոբուսի ուղեւորներին մոտակա կետ փոխադրման կազմակերպման գործում, որտեղից հնարավոր է անհրաժեշտ ուղղությամբ իրականացնել ուղեւորությունը:

Հարկադիր կանգառի եւ ժամանման վայր ուղեւորին հասցնելու անհնարինության դեպքում, ինչպես նաեւ, եթե ուղեւորը դադարեցնում է ուղեւորությունը հիվանդության կամ դժբախտ պատահարի պատճառով, նրան վերադարձվում է ուղեւորության եւ ուղեբեռի տեղափոխման արժեքը (բացառությամբ կոմիսիոն գանձումների)՝ ելնելով անսարքության վայրից կամ հարկադիր կանգառից մինչեւ վերջնակետ եղած հեռավորության հաշվարկից, որը կարգավորվում է համատեղ գործունեության Պայմանագրով:

34. Ուղեւորն իրավունք ունի վերադարձնել տոմսերը դրամարկղ մինչեւ ավտոբուսի մեկնումը եւ ստանալ ուղեւորության լրիվ արժեքը, ներառյալ տոմսերի նախնական վաճառքի գանձումները, հետեւյալ դեպքերում.

ուղերթում ավտոբուսի ավելի քան մեկ ժամ ուշացման դեպքում երթուղույնի չվացուցակով նախատեսված ժամանակի հետ համեմատած,

ավտոբուսում ուղեւորին ավելի ցածրակարգ տեղ տրամադրելու դեպքում, քան այն, որը նախատեսված էր տոմսով: Ավտոբուսում ավելի ցածրակարգ տեղով երթուղույնի ուղեւորի համաձայնության դեպքում նրան վերադարձվում է տոմսի արժեքի տարբերությունը:

Եթե չվացուցակով նախատեսված ավտոբուսի փոխարեն, այլ ավտոբուս ներկայացվի, որում երթուղույնի ավելի թանկ է, ապա այդ մասին հայտարարելուց առաջ տոմսեր ձեռք բերած ուղեւորներն իրավունք ունեն այդ տոմսերով երթուղույնի առանց հավելավճարի: Ավտոբուսի տիպի փոխարինման մասին հայտարարելուց հետո տոմսերը վաճառվում են ավելի բարձր սահմանված սակագնով՝ ուղեւորներին համապատասխան զգուշացում տալով:

Ուշացման դեպքում ուղեւորն իրավունք ունի այն ավտոբուսի մեկնման պահից երեք ժամվա ընթացքում, որի համար նա տոմս է գնել, իսկ հիվանդության կամ դժբախտ պատահարի դեպքում՝ երեք օրվա ընթացքում վերականգնել երթուղույնի փաստաթղթերը տոմսի արժեքի 25% հավելավճարով կամ էլ ստանալ երթուղույնի արժեքը տոմսի արժեքից 25% հանելով:

Դրամի վերադարձն իրականացվում է.

տոմսերի նախնական վաճառքի դրամարկղերում, որոնք վաճառել կամ ուղարկել են տոմսը, մինչեւ ավտոբուսի երթուղույնի մեկնելը՝ օրացուցային մեկ օրվա (մինչեւ 18 ժամ) ընթացքում,

երթուղու սկզբնական կետի ավտոկայանի (ավտոկայարանի) տոմսերի ընթացիկ վաճառքի դրամարկղերում՝ ավտոբուսի երթուղույնի մեկնելու օրը:

7. ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԵԲԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՋՍՎՈՒՄԸ

35. Ուղեւորների եւ ուղեբեռի փոխադրման վերահսկումը ավտոմոբիլային

տրանսպորտով միջազգային փոխադրումների ժամանակ իրականացվում է միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության մասին երկկողմ միջկառավարական համաձայնագրերի եւ այն պետությունների ազգային օրենսդրության հիման վրա, որոնց տարածքներով իրականացվում են փոխադրումները:

36. Ուղեւորների փոխադրումների սույն Կանոնների խախտման համար փոխադրողների եւ ուղեւորների պատասխանատվությունը նախատեսվում է ուղեւորների եւ ուղեբեռի միջազգային ավտոմոբիլային փոխադրումների մասին 1997 թվականի հոկտեմբերի 9-ի՝ Կոնվենցիայով, միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության մասին բազմակողմ եւ երկկողմ միջկառավարական համաձայնագրերով, ինչպես նաեւ այն պետության ազգային օրենսդրությամբ, որի տարածքում կատարվել է խախտումը:

* Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2000 թվականի մայիսի 11-ից: